



ԿՐՕՆԵԿԵՆ, ՊԵՏՄԵԿԵՆ, ԲՆՆԵՍԻՐԵԿԵՆ, ԵՒ ԲՆՐՈՅԵԿԵՆ.

Ի Ի Ժ. — ՇՐՋԱՆ Ե.

1872

ՏԱՐԻ Ե. — ՀՈԿՏԵՄԲԵՐ 31

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

047

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ
ՀԱՅԵՍՏԱՆԵՆՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Ի յառաջարանութիւն Պատմութեան
Ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյս մե-
րոյ և Եկեղեցական կանոնաց՝ կարգեմք
զընդարձակ տեղեկութիւնս յաղագս Ժա-
մակարգութեանց եկեղեցականն պաշտա-
մանց թէ յորոց և յորում ժամանակի և
որպիսի կարգաւորութիւնք աւանդեցան,
որովք արդ լրացեալ անթերի կատարի
ժամերգութիւն Նստուած պաշտութեանս
մերոյ:

Ո՛չ ուրեք ի զիրս մերոցն դտանեմք
զեկեղեցական կարգաւորութեանց պատ-
մութիւնս ո՛չ պատմագրաց Նշգրիս, և
ո՛չ Հարց Եկեղեցւոյ մերոյ, յայանի նը-
շանակեալս ի նոցունց և յորում ժամա-

նակի աւանդեալս, եթէ յորոց ի սրբոց
Հարց ո՛ր կարգ պաշտամանց և ժամա-
կարգութեանց կանոնաւորեցան յԵկե-
ղեցւոջ Հայաստանեայց. և թէ ո՛րպիսի
կարգաւորութեամբ պաշտէր ժամերգու-
թիւն յառաջնոց դարուց քրիստոնէու-
թեանս մերոյ յառաքելոց անտի նախարու-
սաւորչացն մերոց սրբոցն թարգմտի և
Բարդուղիմէոսի, յորոց ընկալաւ Հայաս-
տանեայց Եկեղեցի զԲրիստոնէական հա-
ւատս մինչև ցտուրն Պրիգորիոս Լու-
սաւորիչն մեր, և անտի ցտուրբ Թարգ-
մանիչն մեր կարգաւորիչս եկեղեցական
կարգաց և պաշտամանց ժամերգութեան
ցհինգերորդ դար քրիստոնէութեան:

Եկեղեցական պաշտամունք այսոցիկ
ժամանակաց անյայտ են պատմաբանից և
եկեղեցական Հարց մերոց, այն զե և չու-
նիմք իսկ ազգային մատենագիրս ժամանա-
կակիցս այսոցիկ նախնի դարուց քրիստո-
նէութեանս մերոյ, այլ միայն յիշատակ

շինութեան տաճարաց ինչ յառաքելոց անտի ի Հայաստան *), ձեռնադրութիւն յաջորդաց նոցին յԱպիսկոպոսութիւն, և կանոնաց ինչ ի Թաղդէոսէ՝ որպէս յեկեղեցական կանոնադիրս մեր առանց յայանի նշանակութեանց եկեղեցական կարգաց ժամերգութեանց, որովք յայտ է թէ Քրիստոնէական Աստուածապաշտութիւնք ազգիս կատարէին առ Աստուած:

Բայց այս յայանի ցուցանի ի գործոց թարգմանչացն, զի սուրբն Մեսրոպք որ քարոզէր ի Ղողթն (Սիւնիս), ընթեռնոյր հաւատացեաց զԱստուածաշունչ զիրս (և մեկնէր) Յոյն և Ասորի լեզուաւ, և ոչ սակաւ աշխատութիւն կրէր ի մեկնել նոցա յազգս չինելոյ տակաւին հայկական գրոց. որով հաւաստել մարթ է, եթէ այս կարգ էր յԱռաքելոց ժամանակսն և ցտուրբն Ղրիգոր և մինչ ի թարգմանիչն մեր եկեղեցական պաշտամանց ի Հայաստան:

Եթէ որպիսի կարգաւորութիւն գոյր եկեղեցական պաշտամանց և յաւուրս Արքայն Ղրիգորի, ոչ զբն նոյնպէս ժամանակակից մատենադիրք մեր. բայց ի կառավարութիւն վիճակի հովուապետու-

թեան իւրոյ երևի գրեալ նմին Ղրիգորի կանոն վասն զգուշութեան վիճակի իւրոյ. զի ըստ Խորենացւոյն բանի, որ յետ Ազատանգեղեայ պատմաբանէ ազգիս, զրէ ի գիրս Բ. զԳ. Արիստակեայ ընդ դառնալն ի ժողովոյն Նիկիոյ, յոր գնացեայն էր հրամանաւ Տրդատայ և Արքայն Ղրիգորի և ընդ բերել նմա կանոնս քսան ի ժողովոյն Նիկիոյ, «Սուղ ինչ զըլսս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու, տասէ նա, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակի,»:

Արթանէս որդի Արքայն Ղրիգորի՝ երկրորդ Ապիսկոպոսապետ Հայոց զինի հօրն, յամի 339—340, կարգաւորեաց յեկեղեցիս Հայաստանեայց զպաշտամունս սրբոյ Պատարագին և զաւազանին խորհրդոյ մկրտութեան ըստ Եկեղեցւոյն Արուսաղէմի. զորոյ զկարգս խնդրեաց ի Մակարիոս Ապիսկոպոսէ քաղաքին սրբոյ ութն զլսովք կանոնաց, կոչեցեալ Օրհնութիւնաբեր Յուլյակ՝ հանդերձ կանոնական թղթովք հաւանութեամբ ժողովոյ Ապիսկոպոսաց նորին *):

Յաւուրց սրբոյ Լուսաւորչին եղեալքն պաշտամունք Հայաստանեայց եկեղեցւոյ լինէին Յոյն և Ասորի լեզուաւ պնէ ընթերցուածք Աստուածաշունչ գրոց որպէս ի վեր անդր ասացաք. որ ոչ միայն ի Մակարեան կանոնագրոցն է յայանի, որ ի Յունէ թարգմանեցաւ ընդ ձեռն

(*) Խորենացին յԵրկրորդ Վերս իւր. զԳ. 30. վկայէ շինել Թաղդէոսի առաքելոյ յԵրեսիս զեկեղեցի, որ ապա նուիրեցաւ յանուն սուրբ Աստուածածնի: Յարգաք Քարղուշիմայ նոյնպէս Խորենացին ի թուղթն իւր առ Սահակ Արծրունի՝ շինել նորա յաշխարհին Անձեացեաց ի տեղին Գարնաց Քար՝ զեկեղեցի յանուն սուրբ Աստուածածնի, ուր և եղ զպատկեր նորա ի վերայ կիպարիս փայտի ձեացոցեալն յԱւետարանչէն Յովհաննէ: Արպէս և յազգս ձեռնադրութեան Աղղէի և Զաքարիայ ի Թաղդէոսէ:

(*) Օրհնութիւնաբեր ցոյցակն ասացեալ Մակարիոս Ապիսկոպոսի՝ զնի ի կանոնադիրս Յովհաննու Իմաստասիրին մերոյ Հայրապետի. իսկ համառօտութիւն նորա ի Պատմութեան Հայոց Մ. 2ամչեան, Ա. հտր. եր. 422—423:

Արքայն Սահակայ, այլ և յառաջ քան զայս ևս սուրբն Մեսրոպը յուսուցանելն իւր զԱստուածաշունչ զիրս ի Վողթան զաւասի՝ ընթեռնոյր ժողովրդոց նովին լեզուօք, և Ղազար իսկ պատմաբանն Փարպեցի վկայէ՝ թէ «նաև պաշտօնք եկեղեցւոյ և կարդացմունք զբոց Ասորի ուսմամբ վարէին ի վանօրայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտիլ ժողովուրդքն այսպիսի մեծի աշխարհի յանլուծենէ լեզուին Ասորոց, և յարքունիսն ևս չէր փոքր աշխատութիւն. զի նաև անդր օտար զբով վարէին, մանաւանդ Պարսկականաւ»:

Ժամերգութիւնք եկեղեցական պաշտամանց հիմնաւորապէս ի կարգի եղաւ ի Արքայն Սահակայ պարթևէ, յորժամ նա ըստ Աորեանն վկայելոյ (յամի 426.) զեկեղեցական զիրս թարգմանեաց ի Յունաց ընդ Արքայն Մեսրոպայ. յորում ժամանակի վասն ժամերգութեան որոշելով ասել զՍաղմոսն Ղաւթի յամենայն աւուր, բաժանեաց ութն կանոնս, յորս յաւել և զտասն օրհնութիւնս ի մարգարէից, և զչորեալին քարոզս հանդերձ աղօթիւք՝ ի գիշերային ժամու (ըստ Իմաստասիրին Յովհաննու), զփոխս Հարցին յառաւօտեան ժամու, և զՄեծացուցէն ասել յաւուրս կիւրակէից. յարմարեաց և տօնս Տէրունական աւուրց և տօնս սրբոց ինչ հանդերձ նոցին ընթերցուածովք և պաշտամամբք:

Սոցա երկոցունց կարգեալ և զութն եղանակաւ որ ձայնս և զերկուց Ստեղիս, արարին և զհոգեւից շարական*), սուրբն

(*) Հեղինակք Շարականաց եկեղեցական երգոց ըստ իւրաբանչիւր դարուց նոցին ժամանակաց

Սահակ զՀարցան Աւագ Շարաթուն և Ղազարու, Սուրբն Մեսրոպը զԱզուհացիցն:

Առաջին պաշտամունք ժամերգութեան Հայաստանեայց Ակեղեցւոյ ըստ այսմ կարգի մուծաւ յեկեղեցիս մեր Հայկական գրով ընդ ձեռն նախաթարգմանչացն մերոց. ուստի նախ քան զնոսս, զի չէին պաշտօնք եկեղեցւոյս մերոյ և կարդացմունք զբոց ի Աւուսաւորչէն հետէ զամս իբր ութսուն և ութն ըստ վկայութեան Ղազարու, երևի Սաղմոսն լինել Ղաւթի, և պաշտամունք Պատարագի յաւուրց սրբոյ Հայրապետին Վրթանիսի՝ Յոյն և Ասորի լեզուաւ:

Ապա և Սուրբն Սահակ և Մեսրոպը յետ ըստ այսմ ի կարգի դնելոյ զժամակարգութիւն եկեղեցւոյ Հայաստանեայց, եղեն նոքա առաջին հեղինակք և հնդեցունց եկեղեցական զրեանց մերոց՝ Ժամագրքին, Տօնացուցին Պատարագամատուցին, Մաշտոցին և Շարակնոցին. յորս եթէ ոչք ոմանք յաշակերտաց նոցին և ի յետագայ Հայրապետաց աղգիս զե՞նչ ինչ յաւելին և զո՞րս յայլոց թարգմանեցին, կարգազրեցուք ի հետագայդ:

Ի լրումն Մաշտոց զբոցն, որով եկեղեցական խորհուրդքն կատարին, երանաշնորհ թարգմանիչքն մեր բերին՝ ըստ ձեռագիր պատմութեանց որպէս զնի և ի Մայր Մաշտոցին, զՎանոն Սերմնօրհնէ-

գրով ի սկիզբն տպագրեալ Շարականաց մի առ մի նշանակեալ՝ մեք զանց առնելք կրկնել զանուանս նոցին աստէն: Բայց եթէ ի պատմութիւնս ժողովոցն զեպ լինիցին, ունիմք յիշատակել զհեղինակսն և եթ:

քի, Կալի և Հնձանի, զարարեալն Գրիգորի Աստուածաբանին՝ եբեր ի Հայս ի Նազանզոյ՝ Մովսէս թարգմանիչ, գրիչ Արբոյն Սահակայ ի Իւլ ամի Կաթողիկոսութեան նորա, և յերրորդ ամի թարգմանութեան Արբոյն Մեսրոպայ: Օ, Կանոն Չուր Օրհնելոյն զասացեալն Բարսղե՝ եբեր յԱքուսաղեմայ Խոսրով Թարգմանիչ: Օ, Կանոն ապաշխարող կարգելոյ և արձակելոյ յԱւագ Հինգշաբաթի աւուր, Կիւրղի Երուսաղեմացւոյ արարեալ ի դուռն սրբոյն Սիովնի, բերին Կորիւն և Բնձակ թարգմանիչք: Օ, Կանոն կուսան օրհնելոյ՝ սրբոյն Կիպրիանոսի Կարգեղոնացւոյ: Օ, Ազգայից Հոգեհանգստի և զՔահանայաթաղեն՝ զարարեալ Եփրեմի Ասորւոյն ի Նիկամիդէս քաղաքի, եբեր Գաղբիկ թարգմանիչ յերեքտասաներորդ ամի թարգմանութեան Արբոյն Սահակայ: Օ, Տեառնական (զմատաղ օրհնել) և զԱղ օրհնելն՝ արարեալ է Յուստոս Եպիսկոպոսի, որ չորրորդ է Առաքելոցն: Օ, Աքեմարարէքն (կրօնաւորական հանդերձ) արար Թէոդորոս Եպիսկոպոս Պամիլիւկեայ քաղաքի՝ Տրամանաւ սրբոյն Անտօնի հօրն Թէբայեցւոց:

Սուրբ Առասաւորիչն մեր Գրիգոր, որպէս դնի և ի Մայր Մաշտոցին ըստ ձեռագրաց, արարեալ է զԿանոնս գրակորդացոց, կիսասարկաւագաց և նկարեալ եկեղեցւոյ, դուռն դնել եկեղեցւոյ և ըզնշխարս սրբոց ի հանդիստ փոխել: Ընդ այսոցիկ և սուրբն Սահակ արար զՔահանայօրհնէսն ի քսան և մի ամի Արքեպիսկոպոսութեան իւրոյ. և ի Քահանայաթաղն ևս յաւել զԹոթն Աւետարանս. արար և զաշխարհաթաղն ի Քաղաքու-

ղաշտի ի (Սաղարշապատ) ի վկայարանս սրբոյն Հովփսիմեայ, զի ի սրբոյն Գրիգորէ մինչև ցսա ինքն Սահակ հնոմն վարէին, առի, այս ինքն արարելովն Եփրեմի Ասորւոյ՝ ցհարիւր տասն և մէկ ամ:

Ըստ այսմ և այսչափ ի կարգի եղեալ Արբոցն Սահակայ և Մեսրոպայ զգիրս Եկեղեցական օրհնութեանց՝ յանուն սրբոյն կոչեցին զայն Մաշտոց, յոր կոչելը Սուրբն Մեսրոպ:

Յետ թարգմանչացն այսպէս ի կարգի դնելոյ զեկեղեցական պաշտամունս մեր, Գիւտ կաթողիկոս յետ Մովսէսի առաջնոյ կայեալ զաթոռն Հայրապետութեան յաշակերտութենէ Արբոցն Սահակայ և Մեսրոպայ ի հասակի եօթանասուն ամաց, ըստ վկայելոյ նորին ժամանս կակցի Գաղարու Փարպեցւոյ եմոյժ բազում կարգաւորութիւնս ի ժամերգութիւնս և յեկեղեցական պաշտամունս մեր. ըստ որոյ և ի դուռն Ասենի Ժամագրոց մերոց դնի յետ Արբոցն Սահակայ և Մեսրոպայ կարգաւորեալ զայն և Գիւտայ և Մանդակունւոյն Յովհաննու, այլ թէ ո՞ր ազօթք իցին նորա կամ մաղթանք և կամ քարոզք, չի՞ք յանուանէ յիշատակեալ:

Իսկ սուրբն Յովհան Մանդակունի՝ որ ի Կաթողիկոսութեան իւրում յաւել յինքենէ ի ժամագիրս կարգաւորեալս ի Արբոյն Սահակայ, զորմէ ունիմք գրել ի ներքոյ, յաւել ի Մաշտոց զիրան ըստ վկայութեան Յովհաննու Իմաստասիրի, զՀիմնարկէք եկեղեցւոյ, զԵկեղեցի օրհնէք, զսրբել տաճարի, Ահհոյ և մաղղմայի և հանդերձի, սպասու, աւագան և մկրտութիւն առնել, Խաչ օրհնել և պսակ դնել, զորոց ամենեցուն քարոզս և ա-

ղօթանին արար Մանդակունի սուրբն Յովհանն:

Սա ըստ վկայելոյ Իմաստասիրի՝ ի գիշերային պաշտամունս ժամերգութեան յառաջագոյն կարգաւորեալս ի Սրբոյն Սահակայ, որոյ սկիզբն լինէր Տէր զէ Բարձրասացեալ չորիւք զլիսովք Սաղմոսաց՝ երրորդաւն, ութսներորդ երրորդաւն, հարիւրերորդ երկրորդաւն, և հարիւրքառասներորդ երկրորդաւն, զհետ սոցա կարգեաց սա զսոցին քարոզն Օգարթուցեալքս ամենեքեան, և զաղօթս Օքէն գոհանումք և զնորին հանգիստն՝ Այայեաց Տէր բարերարն:

Առաւօտեան ժամերգութիւնն որպէս տեսանի ի վերն, ի սրբոց Թարգմանչացն էր կարգաւորեալ. ուր զինի շարցին, Ռդորմեային և Տէր երկնիցին՝ երգէին ըզՓառք ի բարձունս*), և ապա զկցորդ Սաղմոսն ըստ իւրաքանչիւր աւուր, որպէս որոշեալն է. սակա որոց և եղ կանոն Սուրբն Սահակ, զի կարգեալ Սաղմոսերգութիւնքն անխափան կառարեսցին յեկեղեցոջ. Կանոն Գ. Ս. Սահակայ:

Մեծացուցէ յաւուրս Ալիւրակէից միայն կանոնեալ էր ասել Սրբոյն Սահակայ զինի շարցին. բայց նախ քան զԻմաստասէրն երևի հասարակեալ այս կանոն:

Իսկ զՍուրբ Աստուածն ասել յառաւօտու և յերեկոյեան պաշտամունս ժամերգութեանց՝ դատանմք առ սովաւ յիշատակեալ. զոր զինի ամենայն պաշտամանց երգէին ի դէմս Որդւոյ հանգերձ

խաչեցարիւ. զի յիննևտաներորդ զըլուխ կանոնաց իւրոց ասէ Իմաստասէր հայրապետ. «Երեկոյինս և յառաւօտինս զինի ամենայն պաշտամանց արժան է նուագել զՍուրբ Աստուածն, յորմէ զերկու ինչ իմանամք, մի՝ զի առ սորին ժամանակօք զոյր հակառակութիւն յամենայն օր երգել զՍուրբ Աստուածն, և երկրորդ՝ մինչև ցաւուրս սորա առաւօտեան և երեկոյեան ժամերգութիւնք մինչև ցՍուրբն Աստուածն միայն էին, զի զինի ամենայն պաշտամանց ասէ, արժան է նուագել զՍուրբ Աստուածն:

Յետ Սուրբ Աստուածին յառաւօտեան ժամերգութեանն՝ ապա զԵրևազային Սաղմոսն «Ազգիցի անուն Տեառն», ասէին ըստ դասուց վերաձայնութեան, զոր կարգեալ է, ասէ Իմաստասէրն՝ Տեառն Ազգի շայոց Աթուղիկոսի, և ի ժամանակաց նորա սկսեալ են ըստ նորին վըկայութեան ի կանոնն ԻԳ:

Իսկ ի պաշտաման երեկոյեան ժամերգութեանն՝ Խոնարհեցո՞՞ ասել նախ քան զԱզրեցոն՝ յաւելեալ է ըստ նորին զրելոյ ի կանոնն ԻԳ, Աերսիսի շայոց Աթուղիկոսի, չէ յայտ եթէ ո՞ր Աերսէս իրցէ, երկրորդն կոչեցեալ Աշտարակցի, եթէ Շինոզն. ուր ըստ դասուց վերաձայնութեամբն ասել՝ իմանի, եթէ այնորիկ Սաղմոսք որպէս և Գլշերապաշտաման և առաւօտինն՝ դաս առ դաս նուագէին ձայնիւ, որպէս արդ զՍաղմոսն յԱւաք Շարաթու և յաւուրս Յինանց. բայց և ի ԽԵրդ կանոնէ նորին Յովհաննու յայտ է, թէ «Տէր զի բաղու՞մ, կոչեցեալ չորեքին Սաղմոսք ասէին միաբանութեամբ ի թիւ խոնարհ ձայնիւ:

(*) Փառք ի բարձունս ասացեալ երգ՝ ընկալեալ եղև ի ժող Եփեսոսի. Ը. զլ. Պատմ. ժողովոցս:

Այսօրիկ ժամակարգութիւնք պաշտամանց Ակեղեցւոյս մերոյ՝ մինչև ցՅովհան Խմաստասէր, և այսքան՝ մինչ ցութերորդ դար քրիստոնէութեան, իսկ անախ մինչև ցՇ նորհալին մեր՝ Աերսէս ցդարն երկօտասաներորդ՝ ոչ ինչ աղօթք կամ մաղթանք և քարոզք յանուանէ գտանին հեղինակեալք ի ժամերգութիւնս մեր բաց յերգոց շարականաց, զորմէ ստորև իսկ Թաղաւորքն կամ Ալէլուք կարգաւորեալք ի ժամերգութեան առանց անուան հեղինակի, այնքիկ որպէս հաւաստի երևի, ի նախնի դարուց անտի հեղինակեալք են և Սաղմոսքն ալէլուք սահմանեալք յեկեղեցւոջ ի թարգմանչացն կամ ի նոցին յետագայից, որպէս և Փառք ի բարձունս, և Աւետարանք ի զիշերային ժամուս յաւուրս Պատարագի, և որք այլք ևս:

Իսկ զշարականս երգել ի ժամերգութեան ի տօնս սրբոց և ի Տէրունականս, արարեալ ի սրբոց թարգմանչաց և ի հոգեւոյս Արդապետաց Ակեղեցւոյ հետ զհետէ գտանեմք յիւրաքանչիւր դարս գրեթէ մուծեալ յեկեղեցի մինչև ցՇ նորհալին՝ Աերսէս և յետոյ ևս քան զնա, զորոց հեղինակացն ասացաք արդ ի վեր անդր ի ծանօթութեան. բայց և զւրբոյ Հայրապետիս մերոյ այսօրիկ զերգս շարականաց և զայլ ասացուածն նորս կարգեալս ի պաշտամունս Ակեղեցւոյ մերոյ զորով յանուանէ նշանակեալ յիւրաքանչիւրոց խորագիրս և մերթ ևս սկզբնատարք երգոց ինչ յառաւօտու և յերեկոյեան ժամերգութիւնս յօդն զանուն նորա, զանց առնեմք աստէն մի առ մի գրել:

Մնայ արդ բացորոշել և յաղագս կարգաւորութեան Պատարագամատուցին, որով պաշտի առ մեզ խորհուրդ սրբոյ Պատարագին. զի առ մատենագիրս մեր ոչ գտանեմք զոճով ասացեալս, եթէ յորոն որպիսի աղօթք կարգեցան ի նմին, կամ ո՞րք կարգաւորեցին զայժմու պաշտամունքս Պատարագի:

Սուրբն Արթանէս, զորմէ գրեցաք ի վերոյ, գտանեմք յիշատակեալ, եթէ կարգաւորեաց զպաշտամունս սրբոյ Պատարագին ըստ եկեղեցւոյն Արուստղեմի. զորոյ զկարգս խնդրեալ էր ի Մակարիոսէ ութն գլխովք կանոնաց. յայտասիկ կանոնս յիշատակին նիւթք խորհրդոյ պատարագին՝ հաց ջերմ և բաժակ անապակ, որպէս և արդ իսկ առ մեզ, և պաշտօնեաց խորհրդոյն. իսկ զաղօթան Պատարագամատուցին, զի ոչ յիշատակին յուժմէ՞ սահմանեալ, պարտեմք վերագրել նմին իսկ սրբոյն Արթանիսի. որ յընդունել ըզկանոնն ի Մակարիոսէ, ասի, թէ յուել և ինքն ի նոյն ինչ ինչ կարգս ուղղութեան ի կատարումն խորհրդոց եկեղեցւոյ. և յրեաց պատուէր առ Ապիսկոպոսունս իւրոյ թեմին՝ յամենայն տեղս միօրինակ կատարել զխորհուրդսն երկիւղածութեամբ. ի կանոն ԺԱ:

Առ Խմաստասիրին Յովհաննու Օձնեցւոյ ի զիրս Յաղագս Վարդաց Ակեղեցւոյ ի գլուխն վասն մեծի աւուր Միաշաբաթին՝ գտանեմք, զի առ նորին ժամանակօք պաշտամունք պատարագին սկսանիւր յերորդում ժամու առաւօտուն՝ ի Մեսեղի ասացեալ Սաղմոսէն՝ «Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ», յետ որոյ երգելով զերեսին սրբասացութիւնան,

Համբառնայր սուրբ Աւետարանն, և ըզմարգարէական և զառաքելական զիրան ընթեռնելով, ընթերցեալ լինէր ապա Աւետարան, և ապա բարձր ձայնիւ խոստովանէին զՀանգանակն Հաւատոյ՝ տրւեալն Արկեղեցւոյ ի Վիկիական ժողովոյն:

Աստի ուրեմն իմանալք, եթէ Ժամամուտն ասացեալ պաշտամունք յետոյ ուրեմն քան զԼամստասէրն կարգեալք են յԱրկեղեցւոջ մերում ի սկիզբն պաշտաման Պատարազի նախ քան զՄեսեղին Սարգս:

Իսկ եթէ Պատարազն անձայն պաշտիւր առ մեզ ի Հնուսն, յայտ ի յետագայիցն է ապաքէն յեկեղեցական անցից յերեքտասաներորդ դարու. յորոց վերայ վէճ և տարաձայնութիւնք ծագեցան ոչ սակաւ:

Այսպիսի ինչ ներածութիւնս բաւական Համարեցուք իբր ի յառաջարան Պատմութեան Ժողովոց Հայաստանեայց Արկեղեցւոյ, կարևորացն վասն ազդիս ընդհանուր եկեղեցականաց և ժողովրդոց, որոց ի հոգևոր պէտս կատարման ընդառաջ լինին հարկաւորութիւնք եկեղեցական կանոնաց և հարկ տեղեկութեան վասն որպիսի պատճառաց նոցին զրութեանցն կանոնաց:

Ե. Արեւելահայոց.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ.

(ՏՐԼ ԳՐԳ):

ՉՊՊԱՅ (ԿԵՆ).

Հայկեան պատմութեան մէջ այնքան նշանաւոր և փառաւոր տեղ զբաւոյ Հոջակաւոր, Հինօրեայ և փարթաւ քաղաքն Հայոց, Արասի գետի եզերքին, Արնջակ և Գողթն դաւառաց սահմանուկցութեան մէջ, որ և ամեն դարուց մէջ զլիովն անցած անցքերովն, կամ մեծագործ և անուանի բնակչաց համբաւովն ամենի հեռաքրքրութիւնն և ակնածութիւնն կշարժէ:

Այս տեղ ձեռնադրեց Բարդուղիմէոս առաքեալն իւր Ամսի աշակերտն յԱպիսկոպոսութիւն Գողթան. այս տեղէն յառաջ եկին այնքան նշանաւոր մարդիկ, որոց ոմանք իւրեանց նիւթական կարողութեամբն մեծամեծ ձեռնարկների մէջ սխրացան, և ոմանք ազգային հանրական գործերի մէջ փայլեցան: Այս տեղ այնքան ծաղկեցաւ և զարգացաւ վաճառականութիւնն, որ Շահաբբասայ հեռատեսութիւնը զրդելով յամի 1605 անինայ տանջանօք և չարաչար տառապակրութեամբ գողթել տուաւ բնակիչքը միւս գաղթեալներէն զատ, Պարսկաստանի մէջ սոցա ձեռօք առուտունն ծաղկեցնելու համար: Բուն Զուղայեցւոց շառաւիղք էին և մեծանուն իշխանքն Աղարեանք ի Ռուսաստան: Այլ փածնի շինութեանց շատերը դեռ մինչև այսօր